



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,
կոնֆլիկտներ

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սարգսյան Կարինե

Ուսումնական հաստատություն՝ Մաստարայի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....	էջ 3
Թեմայի արդիականություն	
1.Ընտանիք հասկացությունը, ընտանիքի տեսակները.....	էջ 4
2.Ընտանիքի հոգեբանությունը, կոնֆլիկտների առաջացման պատճառները.....	էջ 7
3.Եզրակացություն.....	էջ 21
Օգտագործված գրականության ցանկ.....	էջ22

Ներածություն

Թեմայի արդիականությունը - Ուսումնասիրելով այս թեման մեզ հնարավորություն կտա պատկերացում կազմել ընտանիք հասկացության մասին, թե որքանով է ակնառու ընտանեկան կոնֆլիկտներ, լուծման տարբերակները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները-Նպատակը կայանում է նրանում, որ ներկայացվի ընտանիք հասկացությունը, ընտանիքի տեսակները, կոնֆլիկտների առաջացման հիմքերը: Նշված նպատակին հասնելու հիմնական խնդիրներն են.

- Ներկայացնեմ ընտանիք հասկացությունը:
- Ընտանիքի տեսակները:
- Կոնֆլիկտների առաջացման հիմքերը:

Թեմայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս թեման արդի հասարակության կարևորագույն բաղկացուցիչ մասն է կազմում և առանց բարեկեցիկ ընտանիքի հասարակությունը չի կարող գոյատևել :

Ընտանիք հասկացությունը, ընտանիքի տեսակները

Ընտանիք բառը ծագել է լատիներեն familia ծագել է տոհմ, ցեղ բառից:

Ընտանիքը մտերիմ մարդկանց խումբ է, որոնք միմյանց հետ կապված են ամուսնության ակտով, ծնունդով կամ որդեգրմամբ և ապրում են միասին:

Համաձայն ուսումնասիրությունների մարդկանց ամուսնության են մղում սիրելու և սիրված լինելու, սեռական առողջ հարաբերություններ ունենալու, երեխաներ ունենալու, նրանց խնամելու, դաստիարակելու և ապահով կյանքով ապրելու ցանկությունները:

Սոցիալական գիտությունների տեսանկյունից ընտանիքը և սոցիալական կառույց է, և սոցիալական խումբ:

Սոցիալական կառույցն այն կայուն հարաբերությունների հատուկ ձև է, որը հիմնված է արյունակցական կապերի և համատեղ կենցաղի վրա նպատակ ունի բարելավել անհատների վերարտադրության, տնտեսական և հուզական պաշտպանվածության, հասարակական դիրքի պահպանման պահանջները:

Ընտանիքում հաստատվում են անդամների իրավունքներն ու պարտականությունները, բաշխվում են դերերը և այլն:

Իբրև սոցիալական խումբ ընտանիքը միավորում է միասնական գործունեությամբ ու նպատակներով կապված անհատներին, որոնք առաջնորդվում են նույն արժեքներով և նորմերով, տվյալ սոցիալական խմբին պատկանելու զգացում ունեն և տարբերվում են իրենց մյուս խմբերից:

Ընտանիքի ավանդական միջուկը ամուսնական զույգն է, այդ միջուկը լրացնում են երեխաները, ազգականները և ամուսինների ծնողները:

Ընտանիքը միակ խումբն է, որ մեծանում է ոչ թե դրսից` շնորհիվ նոր անդամների ներգրավման, այլ ներսից` շնորհիվ ծնվող երեխաների:

Մասնագետները ժամանակակից ընտանիքի ավելի քան քառասուն տարատեսակներ են առանձնացնում` պայմանավորված ազգային, մշակութային, կրոնական, մասնագիտական և շատ այլ առանձնահատկություններով:

Ընտանիքի տեսակները դասակարգվում են ըստ կառուցվածքի: Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի երկու հիմնական տեսակ` միջուկային և ընդլայնված:

Միջուկային ընտանիքը կազմված է միայն հիմնական անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Այստեղ գործում են առաջնային՝ սերտ ու անմիջական հարաբերություններ:

Ընդլայնված ընտանիքի կազմում, բացի ամուսիններից և նրանց երեխաներից, մտնում են նաև պապը, տատը և այլ հարազատներ:

Ժամանակակից ընտանիքի առաջնային ձևը և հիմքը նահապետական ընտանիքն է, որին բնորոշ էր հարաբերություններում տղամարդու գերիշխանությունը /դոմինանտություն/:

Ընտանիքի այս տեսակը ներառում է միևնույն հարկի տակ ապրող մի քանի սերունդ/հայրեր-որդիներ-թոռներ-ծոռներ/:

Ընտանիքը կատարում է չորս հիմնական գործառույթ.

1. Վերարտադրողական, երբ ընտանիքում ծնվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:

2. Տնտեսական, երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը: Եթե նախկինում տնտեսական գործառույթը ապահովում էր տղամարդը, ապա այժմ այն բաշխվում է ընտանիքի տարբեր անդամների միջև:

3. Սոցիալականացման, դաստիարակչական, որի շնորհիվ երեխան ընկալում և յուրացնում է նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ ընդունված վարքի նորմերն ու կանոնները:

Ընտանիքը այն առաջին միջավայրն է, որտեղ աճում և զարգանում է երեխան, ուստի նաև այստեղ են այն առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգնությամբ նա սովորում է ապրել:

3. Հաղորդակցական, երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին:

Ընտանիքում յուրաքանչյուր անդամ ունի իր սպասումները և ակնկալիքները, իրենց իրավունքները և պարտականությունները: Իրենց սոցիալական դերը ընտանիքի անդամները պետք է ճանաչեն և ընդունեն մյուս անդամների դերերը և նրանց հետ դերային հաղորդակցության մեջ մտնելու ցանկություն ունենան:

Ամեն դեպքում, երբ ընտանիքի անդամները կամովին ընդունում և ստանձնում են ընտանեկան դերերը, լինեն դրանք ավանդական, թե ժամանակակից, ապա նրանց սպասում է խաղաղ և երջանիկ ընտանեկան կյանք: Հակառակ պարագայում կարող են ծագել ընտանեկան վեճեր ու անհամաձայնությունները: Համերաշխ ընտանիքը կարող է ինքը կարգավորել դերային հարաբերությունները, որը ևս ընտանեկան երջանկության գրավական է:

1.Ընտանիքի հոգեբանությունը, կոնֆլիկտների առաջացման պատճառները

Ընտանիքը որպես մարդկանց կայուն սոցիալական հանրություն, ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է հանդիսանում և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճ, բազմացում: Դրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդ (մարդկանց խումբ), ամենասերտ փոխազդեցություն են ունենում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի:

Ընտանիքի ուսումնասիրությամբ մինչև վերջին ժամանակները զբաղվում էր բացառապես միայն սոցիոլոգիան, ստեղծվել էին ընտանիքի տեսական կոնցեպցիաներ՝ սոցիալական ֆունկցիաների, հասարակության այլ ինստիտուտների հետկապերի տեսանկյունից: Սակայն վերջին ժամանակներում մեծ հետաքրքրություն է նկատվում ընտանեկան գործառնության պրոբլեմների վերաբերյալ տարբեր գիտությունների կողմից՝ ազգագրության, մանկավարժության, հոգեբուժության, հոգեբանության և այլն: Այս երեւոյթը բացատրվում է նրանով, որ ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, ընտանիքի դասական ինստիտուտը ճգնաժամ է ապրում համայն աշխարհում՝ կապված ամուսնական, ընտանեկան հարաբերությունների բովանդակության փոփոխման հետ, իսկ այն երկրներում, որտեղ սոցիալ- տնտեսական անկում է՝ ընտանիքի ճգնաժամը կրում է սպառնացող բնույթ: Ճգնաժամը արտահայտվում է նրանում, որ մի կողմից ընտանիքի նոր ձևեր գտնելու ուղիներ են որոնվում, որոնք ավելի լավ կհամապատասխանեն հարաբերությունների ժամանակակից բովանդակությանը, օրինակ՝ հայտնի ամերիկացի հետազոտող Բերրը թվարկում է նկարագրում է ընտանեկան փոխազդեցությունների մոտ 10 ձևեր: Մյուս կողմից, անընդհատ աճում է ամուսնալուծությունների թիվն ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում:

Ելակետային դերն ամուսնական հարաբերություններում խաղում են ամուսնական կոնֆլիկտները: Դրանք հաճախ առաջանում են ամուսինների պահանջումների անբավարարումից: Ելնելով վերը նշվածից, առանձնացնենք ամուսնական կոնֆլիկտների հիմնական պատճառները՝ ամուսինների հոգեսեքսուալ անհամատեղելիություն սեփական «ԵՍ-ի» նշանակալիության, կարելոթության պահանջումների անբավարարվածություն, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի

ցածրացում դրական հույզերի պահանջումներին անբավարարվածություն, նրբանկատության, քնքշանքի, հասկանալու և փոխըմբռնման բացակայություն, հոգսեր եւ այլն ամուսիններից մեկի հակվածությունը սեփական պահանջումներին չափազանց բավարարմանը (ալկոհոլիզմ, թմրամոլություն, խաղամոլություն, ֆինանսական ծախսեր միայն իր համար) տնային տնտեսության վարման, երեխաների դաստիարակության, ծնող-երեխա հարաբերությունների հարցում փոխօգնության, փոխհակադրման պահանջումների անբավարարվածություն հանգստի, ժամանցի, զվարճանքի անցկացման (կազմակերպման) պահանջումների անբավարարվածություն (Ա.Անցուպով, Ա.Շիպիլով)

Առանձնացնում են նաեւ ժամանակաշրջաններ և գործոններ, որոնք ազդում են ամուսնական հարաբերությունների կոնֆլիկտայնության վրա: Անվանենք դրանք ընտանիքի զարգացման ճգնաժամային շրջաններ, կամ փուլեր (Ս.Կրատոխվիլ):

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ,
2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդեցնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը,
3. Երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների եւ նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը,
4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան,
5. Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը եւ այլն:

Գործոնները, որոնք ընտանիքում հանգեցնում են կոնֆլիկտի, թերի կլինեին, եթե հաշվի չառնվեր մակրոգործոնները, այսինքն՝ ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, հատկապես՝ սոցիալական օտարման աճ; սպառողական պաշտանմունքի կողմնորոշում, բարոյական արժեքների արժեզրկում, այդ թվում նաեւ սեռական վարքի դասական ձեւերի, ընտանիքի, կնոջ ավանդական դիրքի փոփոխություն հակադիր խնդիրների, կնոջ լիիրավ տնտեսական ինքնուրույնություն եւ տան տնտեսուհու համախտանիշը, տնտեսության, ֆինանսների, պետության սոցիալական ոլորտի ճգնաժամային վիճակը:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 80-85% ընտանիքներում առկա են կոնֆլիկտներ՝ մնացած 15-20% -ի մոտ նկատվում են տարբեր պատճառներով վեճերի առկայություն: Ընտանիքը հիմնական դաստիարակչական ինստիտուտներից մեկն է: Այն ապահովում է երկու անհրաժեշտ պայման՝

ա) մեծահասակի եւ երեխայի, երեխայի եւ հասակակցի շփում,

բ) այդ շփման տեւողությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանկական ներոզների հիմնական աղբյուրը հանդիսանում է ընտանիքում միջանձնային հարաբերությունների խաթարումը, ընտանեկան հարաբերությունների աններդաշնակությունը Սանկտ - Պետերբուրգյան հետազոտողների տվյալներով ներոզներով տառապող 1000 երեխաներից, 561-ի մոտ նկատվում է ընտանիքում անբարենպաստ վիճակ, որոնցից 148-ը ունեին խանդի զգացում քրոջ կամ եղբոր հանդեպ: Կարգազանց վարքի հետազոտությունները նույնպես մատնանշում են անբարենպաստ ընտանեկան պայմանները, այն համարելով նմանատիպ վարքի հիմնական պատճառ: Օրինակ՝ դժվար դաստիարակվող երեխաների հատուկ դպրոցի 432 տղաներից 78,2%-ը դաստիարակվել էին (ապրել, մեծացել) ոչ լրիվ ընտանիքներում, կամ չեն ունեցել ծնողներ: Երեխաներից յուրաքանչյուր 3-րդի մոտ մայրը տառապել է ալկոհոլիզմով, յուրաքանչյուր 4-րդի մոտ՝ և հայրը, և մայրը: Ավելի քան 10%-ի մայրերը անց են կացնում անբարոյական կենսակերպ (Վ.Ստոլին, Ա.Օբոզով, Ա.Բոդալեւ):

Այն հետազոտությունների արդյունքները, որոնք մենք ստացել ենք Ստեփանավան քաղաքում (Լոռու հոգեբանական ծառայության կենտրոն), համանման են՝ հետազոտված 6-13 տարեկան հոգեկան զարգացման հապաղումով 15 երեխաներից բացահայտվեց, որ վերոհիշյալ պաթոլոգիայով տառապում են միայն երեքը, իսկ

մնացած 12-ի մոտ նկատվում էր միայն մանկավարժական բացթողում, եւ նրանք բոլորը ռիսկի խմբից էին, այսինքն անբարենպաստ ընտանիքներից: Տարբեր տիպի ֆոբիաներով տառապող երեխաներից (հետազոտվել է 34 երեխա) 14-ի մոտ ծնողներն ապրում են առանձին, 10 -ի հայրերը գտնվում են հանրապետությունից դուրս, 3 երեխայի մայր զբաղվում է մանր բիզնեսով և երեխայի դաստիարակությամբ զբաղվում են հիմնականում տատիկները: 10 երեխաների ընտանիքներում երկու ծնողն էլ գործազուրկ են, 7-ի հայրերն են գործազուրկ: Բոլոր ընտանիքներում էլ նկատվում էին հաճախակի կոնֆլիկտներ: Համանման տխուր վիճակագրությունը կարելի է շարունակել անվերջ, եւ որեւէ մխիթարություն գտնելը շատ դժվար է:

Կապված կոնֆլիկտների հաճախականությունից, խորությունից և սրությունից, առանձնացնում են՝

- ձգնաժամային,
- կոնֆլիկտային,
- պրոբլեմային,
- ներոտիկ ընտանիքներ

(Վ.Տորոխտի):

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ընտանիք - հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր բնույթ եւ ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ կարող են դառնալ բոլոր վերոհիշյալ պատճառները: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ, եւ նոյնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաեւ այն ընտանիքները, որոնք քայքայվում են, կամ գտնվում են փլուզման եզրին:

ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ընտանիք - ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բխվում են, առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ: Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաեւ զիջումների եւ կոնֆլիկտների փոխզիջումային լուծումների միջոցով:

ՊՐՈՐԸԵՄԱՅԻՆ ընտանիք - սրան բնորոշ են դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Օրինակ, բնակարանի բացակայությունը, ամուսիններից մեկի երկարատև հվանդությունը, ընտանիքը պահելու միջոցների բացակայությունը, հանցագործության համար երկարատև ժամանակով դատապարտվելը եւ մի շարք այլ խնդիրներ: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի, կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսևորում:

ՆԵՎՐՈՏԻԿ ընտանիք - այստեղ հիմնական դերը խաղում են այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն եւ այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի, քողարկված և բաց ակնհայտ ձևերով. ցուցադրական - դեմոնստրատիվ լռելը, կտրուկ շարժումը (ժեստ), անհամաձայնություն նշանակող հայացքը, հարաբերություններում ընդգծված, շեշտված սառնությունը եւ բացահայտ խոսակցությունը տարբեր ձևերով եւ դրսևորումներով:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների եւ նրա իրական կյանքի միջեւ: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով: Այսպիսով Լոռվա հոգեբանական ծառայության կենտրոնում հետազոտություն է անցկացվել ընտանիքում 2 տիպի կոնֆլիկտայնության թեմայով.

1-ը ամուսինների սոցիալական դիրքի եւ դերի փոփոխություն,

2-րդը գործազրկության դերը ընտանեկան կոնֆլիկտներում:

1-ի թեմայում ընտանիքի կազմակերպման բարդ և հակասական գործընթացների խորին հասկացման համար էական նշանակություն ունի ընտանիքում

գերիշխանության ճանաչման դրդապատճառների վերլուծությունը: Ընտանեկան գերիշխանության հիմնական ցուցանիշներ են ծառայում ամուսինների կարծիքները: Պատասխանելով այն հարցին, թե ով է հանդիսանում իրենց ընտանիքում գլխավորը, ամուսիններից յուրաքանչյուրը կարող էր ընտրել 6 առաջարկված տարբերակներից մեկը. «ամուսինը (տղամարդը)», «կինը», «ընտանիքի այլ անդամներից որեւէ մեկը», «տղամարդը գլխավոր է հանդիսանում մի հարցում, իսկ կինը՝ մյուս», « բոլոր հարցերում գոյություն ունի իրավահավասարություն», «դժվարանում եմ պատասխանել»:

Գլխավորության ընդհանուր ցուցանիշների շարքում կիրառվում էր նաև մասնավոր ցուցանիշներ, որը բնութագրում է ընտանեկան կյանքի տարբեր կողմերի կազմակերպման հարցում ամուսիններից յուրաքանչյուրի իրավանդությունը.

ընտանիքի անդամների կազմակերպումը տնային գործերի կոլեկտիվ կատարման համար, ընտանիքի նյութական ապահովումը ամուսիններից յուրաքանչյուրի հեղինակությունը ընտանեկան դրամարկի պահպանումը եւ ընտանիքի եկամուտների բախշումը, ընտանիքի հանգստի կազմակերպումը, ընտանիքում բարենպաստ հոգեբանական մտնուլորտի ձեւավորումը: Թվարկված ցուցանիշները, որոնք բացահայտում են ամուսինների կազմակերպչական ֆունկցիան ընտանիքի կենսագործունեության տարբեր ոլորտներում, մեր կողմից դիտվում էին որպես ընտանեկան գերիշխանության կոնկրետ դրսևորում: Մինևույն ժամանակ դրանք կարող էին հանդես գալ որպես գլխավոր դրդապատճառ, որով առաջնորդվում են ամուսինները իրենց ընտանիքում, գերիշխանության հասարակական ձեւերը որոշելիս:

Որպես գերիշխանության (գլխավորության) ճանաչման այլ հավանական դրդապատճառ, դիտվում էին՝

ամուսինների սոցիալ դեմոգրաֆիկ ցուցանիշները (տարիքը, մասնագիտությունը, կրթական աստիճանը) ընտանեկան - կենցաղային գործունեության տարբեր ձեւերում մասնակցությունը ամուսինների անձնային որակների ինքնա և փոխադարձ գնահատականները: Արդյունքների վերլուծության ժամանակ բացահայտվեց էական տարակարծիքություն ընտանիքում տղամարդկանց եւ կանանց գլխավորության բնույթի մասին: Այսպես, տղամարդու գերիշխանությունը նշել են 31,5% տղամարդիկ, և 16,5% կանայք, ընդ որում այն ընտանիքների թիվը որոնցում երկու ամուսինն էլ

գլխավոր են համարել տղամարդուն, կազմում է 11% ընդհանուր վերցվածքից: Կանանց գերիշխանությունը (գլխավորությունը), կանայք իրենք նշել են համարյա 2 անգամ հաճախ, քան իրենց ամուսինները (համապատասխանաբար 29,5% և 13,5%): Իսկ այս դեպքերում ամուսինների կարծիքների համընկումը կազմել է 7,8% : Առանձին դեպքերում կարծիքների տարածայնությունը կրում էր կոնֆլիկտային բնույթ, երբ ամուսինը ընտանիքի գլուխ համարում էր իրեն, իսկ կինը՝ իրեն:

Այս տվյալները վկայում են ընտանիքի ինքնակազմակերման առկա դժվարությունների մասին, որոնք կարող են ազդել նրա կենսագործունեության բոլոր ոլորտների վրա: Դրանց պատճառները, ըստ էության, կապված են նորմերի և ավանդույթների վերակառուցման հետ՝ հին նորմերը և ավանդույթները հակասում են այն պայմաններին որում գտնվում է մեր հասարակությունը, իսկ նոր նորմերն ու ավանդույթները, հասարակական դիրքորոշումները դեռևս ձեւավորված չեն:

Հարկ է նշել, որ այն ընտանիքներում որտեղ մարդիկ բավարարված, գոհ էին իրենց ընտանեկան կյանքից, եւ համարում էին ամուսնությունը երջանիկ, իրենց կարծիքների համաձայնեցվածությունը ընտանիքի գլխավորության հարցում նշվում էր տղամարդը, կամ գլխավորությունը բաժանված էր ամուսինների միջեւ, հավասարաչափ, իսկ այն ընտանիքներում, որոնցում կար տարածայնություն, գլխավորության հարցում, հենց ամուսիններն էին նշում հաճախակի կոնֆլիկտների առկայություն եւ ընտանիքի անկայուն վիճակ:

Գլխավորությանը բնորոշ գծերից մեկը, ամուսինների կարծիքով, համարվում էր վերջիններիս մոտ մշտական աշխատանքի առկայությունը, ստացած աշխատավարձի քանակությունը եւ հասարակական դիրքը:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել կնոջ ճանաչման դրդապատճառի առանձնահատկությունների վրա: «Դրական» դրդապատճառի շարքում, կապված ընտանեկան գործունեության իր անձի բարձր գնահատականով, կնոջ մոտ առկա է նաև ուրիշ շարժառիթ՝ ամուսնու կողմից ընտանեկան գործունեության կազմակերպման անկարողության ընդունում: Նման տիպի բացասական» մոտիվացիան հիմնականում շեշտվում էր հենց իրենց՝ կանանց կողմից: Հարցումներ կատարող աշխատակիցների հետ զրույցի ժամանակ, պարզվեց որ ընտանիքի ղեկավար կանայք արտահայտում են այն կարծիքը, իբր բոլոր պրոբլեմները, որոնք առաջանում են ընտանիքում, լուծում են ստանում միայն իրենց շնորհիվ, քանզի ամուսինները խուսափում են ընտանիքի գործերից եւ խնդիրներից: Երևի թե սրանով

է բացատրվում այն փաստը, որ կանացի գլխավորությամբ ընտանիքներում դիտվում է ամենացածր բավարարվածությունը ընտանեկան փոխհարաբերություններով (մանավանդ կանանց մոտ): Պետք է ավելացնել նաեւ այն, որ կանացի գլխավորության ընդունումը, ինչպես կնոջ, այնպես էլ ամուսնու կողմից, սերտորեն համահարաբերակցված է ամուսնու աշխատազրկության եւ կնոջ աշխատանք ունենալու հետ:

Ինքնագնահատականների եւ փոխադարձ գնահատականների վերլուծության ժամանակ պարզվեց, որ կինը, որպես կանոն, ամուսնու անձնային որակները գնահատել էր շատ ավելի ցածր քան սեփական անձնային որակները: Կնոջ կողմից ամուսնու գնահատականների իջեցումը տարածվում էր անձնային որակների բոլոր կառույցների վրա, բայց ավելի արտահայտիչ դա երևում էր ամուսնու գնահատականի կամային եւ մտավոր հատկությունների վրա, ինչպես եւ այն որակների, որոնք բնութագրում են վերջինիս վերաբերմունքը արտադրական եւ տնային աշխատանքին: Այդ որակների ցածր գնահատականը մատնանշում էր ամուսնու հեղինակության իջեցումը ընտանիքում, ծառայում որպես «բացասական» դրդապատճառներից մեկը, որոնցով էլ առաջնորդվում էր կինը հաստատելով իր առաջնայնությունը (գլխավորությունը) ընտանիքում: Աշխատատեղերի բացակայության ֆոնի վրա հաճախ կարելի էր կռահել կնոջ հետևյալ միտքը. «Ես վերցնում եմ ինձ վրա ընտանիքում գլխավորի դերը ոչ թե համապատասխանում եմ այդ դերին, այլ այն պատճառով, որ այդ պարտականությունները ունակ չէ կատարել ամուսինս»: Իսկ ամուսինները, իրենց հերթին իրենց գլխավորությունը ընտանիքում համարում էին որպես բնականոն երևույթ, որը պատճառաբանում չի պահանջում: Այս ցածր մոտիվացիայի հետևում, սեփական գլխավորության, երևի թե թաքնված է մեկ ուրիշ, ավելի ուժեղ դրդապատճառ՝ ավանդույթներին, բարքերին, սովորույթներին հետևելը, որտեղ ընտանիքի գլխավորությունը նախընտրվում է տղամարդը: Վերը նշվածից երեւում է, որ այն ընտանիքներում, որտեղ ամուսինների դիրքերը և դերերը ընկալվում են ադեկվատ, ապա կոնֆլիկտայնությունը շատ ավել լի ցածր է քան այն ընտանիքներում, որտեղ ամուսիններից մեկի առաջնորդությունը (գլխավորությունը) չէր ընդունվում ամուսիններից մյուսի կողմից:

Հետազոտությունից պարզ դարձավ, որ ամուսնու սոցիալական դիրքի իջեցման հիմնական պատճառը՝ աշխատանքի բացակայությունն է: Իսկ իր պատկերացումը սեփական գերակայության դերի մասին եւ կնոջ հավասար, կամ գերակայուն դերի

չընդունելը,- երևի թե սեփական դիրքի « ԵՍ-ի » պահպանման փորձն է նախկին դիրքի վրա: Նման ընտանիքները մենք կոչեցինք պրոբլեմային:

Վերը ներկայացրածից կարելի է հետևություն անել,որ լիդերության խնդիրը ամուսնական կյանքի ամենասուր եւ ամենաբարդ պրոբլեմներից է:

Որպեսզի ավելի լավ պատկերացում կազմենք աշխատազրկության՝ որպես սոցիալական փոխազդեցության ուժեղ կոնֆլիկտոգեն, ազդակ ընտանիքի համար, քննարկենք մեր կողմից հետազոտված հաջորդ թեման՝ աշխատազրկության դերը ներընտանեկան կոնֆլիկտներում: Հետազոտվողները բաժանված են եղել 3 տարիքային խմբերի՝ I խումբ 21-31 տարեկաններ, II- խումբ 31-45 տարեկաններ, III- խումբ- 46-55 տարեկաններ: Գործազրկության ընկալումը տարբեր տարիքային խմբերի կողմից տարբեր էին, օրինակ՝ երիտասարդները իրավիճակը ըմբռնում էին որպես բնական երևույթ, ոչ դրամատիկ եւ անպայման անցումային. պատճառը ընհանուր սոցիալական եւ տնտեսական դժվարություններն են: « Հիմա բոլորն են անգործ», նեգատիվ զգացումները առաջանում են անորոշությունից «չգիտեմ ինչ է լի նելու ինձ հետ հետագայում»: Բարձրագույնավարտների մոտ հատուկ նեգատիվ ապրումներ էին առաջացնում օտար լեզվի սովորելու դժվարությունները (հաճախ անգլերենի): Գլխավոր նպատակը՝ շուտափույթ դրամ վաստակելն է: Վերաբերմունքը ուսման նկատմամբ՝ բացասական, հիմնական պատճառաբանությունը այն է, որ վերջինս չի ապահովում աշխատատեղ:

Աշխատատեղ ունենալու սեփական հնարավորությունները փոքր ինչ ուռճեցված են, բայց նպատակաուղղված աշխատանքի փնտրումը բացակայում է:Վարքի դրսևորումներում գերակայում է խառը, քառտիկ փնտրողական գործունեություն, որոնք մերժումից հետո ընդհանրապես դադարում են: Իրականում այս խմբի ներկայացուցիչները ապրում են օրվա «կենցաղային» թեմաներով: Տիպիկ է անցում դեպի կենցաղային մանրունքներ:Այս խմբի ընտանիքները հիմնականում պրոբլեմային են:

II- խումբ 31-45 տարեկաններ - այս խմբի ներկայացուցիչները որպես կանոն թերազնահատում են իրենց հնարավորությունները աշխատանքի շուկայում, գործազրկության իրավիճակը գնահատվում է որպես դրամատիկ եւ ձգնաժամային սեփական կյանքի համար: Հասարակությունից «արտանետված լինելու» զգացումը առաջացնում է սուր հոգեբանական բացասական ապրումներ: Դրամ վաստակելու թեման նույնպես գրավում է կենտրոնական դիրք: Աաշխատանքի որոնումները ի

սկզբանե կրում են սիստեմատիկ եւ պլանավորված բնույթ, քան առաջի խմբի ներկայացուցիչների մոտ: Սակայն այս խմբի ոչ բոլոր ներկայացուցիչներն ունեն ֆիզիկական եւ հոգեկան ուժեր՝ դիմակաելու արտաքին կարծքր ազդակներին: Առողջության թեման համարվում է բավականին ակտուալ, չնայած, սրա մասին գերադասում են լռել: Այս խմբի ներկայացուցիչների ընտանիքները համարվում են կոնֆլիկտային անցումով դեպի ճգնաժամայինը:

Վերջիններիս մոտ անհրաժեշտ է ձևավորել կայուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, իրավիճակի հզոր հոգետրավմատիկ ազդակներին դիմակայելու համար: Այստեղ ակտուալ են ֆրուստրացիայի եւ սթրեսի հաղթահարման խնդիրները: Տվյալ իրավիճակում միջավայրը ընկալվում է խեղաթյուրված, և սեփական մտավախությունները ներկայացվում են որպես իրականություն:

III- խումբ 46-55 տարեկաններ- այս խմբի ներկայացուցիչների մոտ գործազրկությունը առաջացնում է կրտիկական և անհանդուրժելի հոգեվիճակ: Մարդիկ փորձում են անել ամեն ինչ, որ հաղթահարեն այն: Սոցիալական «ար տանետման» թեման դառնում է ավելի ազդեցիկ եւ կենտրոնական: Աշխատանքների որոնման գործընթացում գերակշռում է ակտիվ, նպատակաուղղված ռազմավարությունը: Կրկնվող անհաջողությունների դեպքում վերջիններս հրաժարվում են բարձր վարձատրվող հավակնություններից եւ համաձայնվում են ցանկացած առաջարկներին, նույնիսկ համաձայնվում են ամենացածր աշխատավարձով տեղերին:

Այս խմբի ներկայացուցիչների մոտ ակտիվորեն ձևավորվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, փորձում են գտնել փաստարկներ աշխատանքատեղերի բացակայության օգտին եւ այլն: Իրենց կողմից հիմնականում քննարկվում են կենցաղային թեմաներ եւ ընտանիքում եղած փոխհարաբերությունները, որտեղ կոնֆլիկտները անխուսափելի են, եւ տվյալ ընտանիքները համարվում են ճգնաժամային: Չնայաց ապահարզաններ լինում են հազվադեպ, ամուսինների հանմատեղ կյանքը բարդեցված է հոգեսեքսուալ անահամատեղելիությամբ: Այս դեպքում հասարակական կյանք մտնելու հավանականությունը տվյալ անհատների կողմից բաց չի թողնվում:

Աշխատանքներ էին տարվում նաեւ գործազուկների կանանց հետ, ովքեր համարում էին իրենց ընտանիքի գլխավորը: Մենք իրենց միշտ հարցնում էինք, թե երեխաները ավելի հաճախ ում են դիմում իրենց պրոբլեմով՝ հորը, թե մորը: 10-ից 8-ը պատասխանում էին, որ հորը: Մայրերը դա բացատրում են նրանով, որ կանայք

ստիպված են լինում լինել խստապահանջ երեխաների նկատմամբ դասերի սովորելու, զանցանք չկատարելու պատճառով, այն դեպքերում, երբ հայրերը փաստացի բացակայում են, կամ չեն խառնվում ներընտանեկան անցուդարձին: Մեր փորձը հուշում է մեզ այլ բացատրություն՝ համատեղ կայնքը ցածր ինքնագնահատական ունեցող անձի հետ, կնոջ մոտ առաջացնում է բնավորության գծերի առանձնահատուկ փոփոխություններ, ձևավորելով բարդույթը, որը կոչվում է համակախյալ վիճակ: Բնավորության այս առանձնահատկությունը խոչընդոտ է հանդիսանում նորմալ միջանձնային հարաբերությունների համար:

Համակախյալ կարող են լինել ինչպես կանայք, այնպես էլ ընտանիքի մյուս անդամները, նույնիսկ մոտ ընկերները եւ բարեկամները: Համակախյալ տերմինը մենք դիտում ենք որպես հուզական, հոգեբանական եւ վարքային դրսևորում, վիճակ, որը ձևավորվել է երկարատեւ սթրեսի ազդեցության եւ ճնշող կա նոնների օգտագործման ներքո, որոնք թույլ չեն տվել ազատ արտահայտել սեփական հույզերը եւ ուղղակի քննարկել անձնային եւ միջանձնային խնդիրները:

Շեշտվում է, որ համակախման իմաստը դա մտքի կոնցենտրացիան է ուրիշի կյանքի էության վրա, ինչը առաջացնում է ադապտացիայի խանգարում: Համակախյալ կանայք՝ վերահսկող կանայք են, իրենք հավատում են այն բանին, որ կարող են վերահսկել ամեն ինչ եւ բոլորին: Սկզբից իրենք փորձում են վերստուգել ամուսիններին բժախնդրությամբ, վիճաբանությամբ, հոգեբանական կշտամբանքներով, հետո փորձում են ամուսնու համար աշխատանք գտնել, «դուրս բերել դեպի կյանք» և այլն: Մեր փորձը այս տիպի կանանց հետ ցույց տվեց, որ վերջիններիս մոտ շատ ուժեղ է արտահայտված պատասխանատվության զգացումը, նրանք կարող են ոչ միայն ճանաչել սեփական պրոբլեմները, այլ նաեւ լուծում գտնել եւ հաղթահարել:

Այսպիսով շատ գործազուրկների կանայք տառապում են ոչ պակաս, քան իրենց ամուսինները, և բնականաբար հոգեբանական օգնության կարիք ունեն:

Ընտանեկան կյանքը միշտ հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր ու կոնֆլիկտներ, որոնք կարող են ընդգրկել ընտանեկան կյանքի տարբեր ոլորտները՝ հաղորդակցում, սեռական կյանք, նյութական բարեկեցություն, երեխաների դաստիարակություն, ազատ ժամանակի կազմակերպում, հետաքրքրություններ, վատ սովորություններ/թմրանյութերի, ալկոհոլի, թղթախաղի նկատմամբ/ և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:

Ըստ հոգեբանների ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների տեսակ կա.

1.Ներանձնային – անձը սխալ է գնահատում շրջապատի իրադարձությունը, որի արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2.Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է երկու կամ ավելի մարդկանց միջև: Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից:

3.Անհատական - խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4.Միջխմբային կոնֆլիկտ - այս դեպքում բախում կարող է լինել խմբերի, նպատակների, վարքի միջև:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար պետք է առանձնացնել 3 համակարգ՝

1.Էզոցենտրիկ համակարգ, որի հիմքում ընկած է սեփական եսը:

2.Ալլեցորոցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը:

3.Սոցիոցենտրիկ - հիմքում ընկած է մեկը:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններ են.

1.Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջին տարին, երբ ձևավորվում են նոր հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2.Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական կյանքի, ժամանակավոր սեռական կյանքի ակտիվության նվազումը:

3.Բաշխման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բաշխումը:

4.Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այն շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ կամ քաղցի շրջան:

5.Իվոլուցիոն կամ միայնակության փուլ: Այն համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո:

Կարող է ձևավորվել միայնակություն զգացում ` կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վաթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն: Շատ հոգեբանների կարծիքով ` ամուսինների միջև վեճերն ու անհամաձայնությունները ծագում են նրանցից որևէ մեկի /կամ երկուսի/ որոշակի պահանջմունքների անբավարարվածության հետևանքով:

Ամերիկացի հոգեբան ՌԷ.Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հինգական հիմնական պահանջմունքներ,որոնց բավարարումն ապահովում է ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի ընդհուպ ամուսնալուծության:

Տղամարդկանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում

- 1.սեռական բավարարվածություն,
- 2.հանգստի ուղեկից
- 3.հմայիչ կին
- 4.տնային տնտեսության վարում
- 5.հիացմունք

Կնոջ հինգ պահանջմունքները ամուսնության ոլորտում

- 1.քնքուշություն
- 2.խոսելու ,զրուցելու հնարավորություն
- 3.ազնվություն և անկեղծություն
- 4.ֆինանսական աջակցություն
- 5.ընտանիքին նվիրվածություն:

Ընտանեկան անհամաձայնության պատճառն ընտանիքում իշխանության համար: Այս դեպքում ամուսիններից յուրաքանչյուրը ձգտում է հասնել հեղինակության,փորձում է ճնշել դիմացինին, որոշումների կայացման հարցում իր կամքը թելադրել:

Մասնագետների կարծիքով ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառներն են սեռական կամ հոգեբանական անհամատեղելությունը, նյութական խնդիրները:

Եզրակացություն

Իրավիճակը, որում հայտնվել են հայ ընտանիքները, (նախկին բարեկեցությունը, կայունությունը, որոշակիությունը, ապագայի նկատմամբ դրական դիրքորոշումը, փոխարինվեցին անբարեկեցությամբ, անկայունությամբ, անորոշությամբ, ապագայի նկատմամբ բացասական դիրքորոշմամբ, փոխվեցին նաեւ հոգևոր արժեքներն ու ավանդույթները), ունի քայքայիչ, վնասաբեր ազդեցություն մարդու հոգեկանի վրա՝ առաջացնում է ֆրուստրացիոն վիճակ, ազրեսիվություն, ձևավորում անձնական և հանրային ակտիվության իմաստի կորուստ:

Վերը նշվածից երևում է, որ սոցիալական դիրքի իջեցումը, դա սեփական դերի հոգեբանական գնահատականն է, ինչը առաջացնում է թերարժեքության զգացում, որը կարող է վերաճել թերարժեքության բարդույթի: Ասվածը փորձեն ներկայացնել օրինակով՝ հետազոտված 40 ճգնաժամային ընտանիքներից, 36-ի ամուսնական զույգերը իրենց ընտանիքի անհամերաշխության հիմքում տեսնում էին վերը նշված կոնֆլիկտների բոլոր 6 հիմնական պատճառները: Առաջին տեղը դրանց մեջ զբաղեցնում է հոգեսեքսուալ անահամատեղելիությունը: Տվյալ խնդրի մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվեց, որ տղամարդկանց մոտ ձևավորվող թերարժեքության բարդույթը, որի դրսևորումներից է ֆունկցիոնալ սեռական թերկարողությունը, ավելի հաճախ է հանդիպում աշխատանքը կորցրած, հասարակական դիրքը եւ ընտանիքում գլխավորի դերը զիջած անհատի մոտ, ինչը առաջացնում է ներանձնային կոնֆլիկտ, որն էլ իր հերթին ունի 2 ճանապարհ՝ կամ պայքարել, մոբիլիզացնել ուժերն ու կարողությունները և տիրապետել իրավիճակը (ինչը անհամեմատ բարդ է), կամ կոտրվել, հաշտվել և կորցնել ամեն ինչ:

Ընտանիքի եւ ամուսնության զարգացման գործում, շատ հեղինակների տվյալներով, մեծ նշանակություն է ստանում սուբյեկտիվ գործոնը, մասնավորապես դեմոգրաֆիկ ցուցանիշները վկայում են, որ ապահարզանների պատճառների հիմքում բավականին բարձր է ապահարզանի հոգեբանական մոտիվացիայի տեսակարար կշիռը, ինչպիսիք են՝ բնավորությունների անհամատեղելիությունը, սիրո զգացումի կորուստը, կամ բացակայությունը եւ այլն: Միաժամանակ շեշտվում է, որ ամուսնության կարևորագույն ֆունկցիաներից է նաեւ ընտանիքում հոգեբանական կոմֆորտի ապահովումը, այսպես կոչված « ամուսնության թերապետիկ ֆունկցիան»: Սակայն դեմոգրաֆիկ եւ ստատիստիկ հետազոտությունները միայն ֆիկսում են տվյալ փաստը, չտալով վերլուծություն այդ երևույթին: Խորությամբ

ուսումնասիրել ընտանիքի գործունեության պրոցեսները հնարավոր է միայն հոգեբանական հետազոտությունների հատուկ մեթոդներով:

Այսպիսով ընտանիքն արժեք է և չպետք է թույլ տալ, որ վեճերն ու հակասությունները հասցնեն ընտանիքի կորստի: Այստեղ կարևորվում են փոխզիջումը և կոնֆլիկտի պատշառների ու ընթացքի վերլուծությունը, չբավարարված ցանկությունների բացահայտումը, սեփական հույզերի արտահայտումը՝ խուսափելով մեղադրելուց, ինչպես նաև դիմացինին մինչև վերջ լսելու և ըմբռնելու, ապրումակցելու կարողությունը:

Ընտանեկան կոնֆլիկտից հետո մեծ դեր ունի ներումը, որը դիմացինի նկատմամբ սիրո և անշահախնդրության դրսևորում է: Ներելիս մարդը հրաժարվում է դիմացնի նկատմամբ բացասական մտքերից, հույզերից և վարքային դրսևորումներից՝ խթանելով իր մեջ դրական հույզերն ու վարքը:

Կոնֆլիկտների հաղթահարման ուղիներն են.

1.Կոնֆլիկտի նախատեսում

Օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, մարդկանց փոխգործակցության, ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում.

2.Կոնֆլիկտի կանխարգելում – այս սուբյեկտի կառավարման գործունեության տեսակ է, որն ուղղված է կոնֆլիկտի ծագմանը խոչընդոտելուն:

3.Կոնֆլիկտի կանխարգելում – սա սուբյեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի թուլացմանը, սահմանափակմանը, մարմանը:

4.Կոնֆլիկտի լուծում-Սա ուղղված է կոնֆլիկտի ավարտին:

Այսպիսով ցանկացած իրավիճակում ընտանիքում կարելի է փոխզիջման գնալ, որը իր հերթին կնպաստի առողջ հասարակություն ունենալուն

Օգտագործել եմ հետևյալ գրականությունը

1. Հասարակագիտության VIII դասագիրքը
2. Հասարակագիտության X դասարանի դասագիրքը
3. С.Кратохвил <<Психотерапия семейно-сексуальных дисгармоний>>
4. <<Հոգիվաճներ >> ամերիկացի հոգեբան Ֆ.Հարլի աշխատությունների.